որի բացվածքը 18 մետր է։ Նա այժմյան Ալավերդի շրջանային կենտրոնում Դեբեդ գետի երկու ափերն է միացնում, որի վրայով այժմ էլ Ալավերդուց մարդիկ և ավտոմեքենաները գնում են Սանահին և այլ գյուղեր։ Կամուրջի աջակողմյան հիմքը դրված է

Նկ. 16. Ս. Գրիգոր եկեղեցին ամ կողմից։

բարձրադիր ժայռի վրա, իսկ ձախակողմյանը՝ (Ալավերդու կողմինը) գետի ցածրադիր ափին, ուստի կամուրջի այդ կողմի կեսը զգալի կերպով վերելք ունի դեպի կենտրոնը, իսկ դեպի մյուս բարձրադիր ափը տանող կեսը հարթ է։ Կամուրջը երկու կողմից ունի քարաշար պատնեշ, որոնց վրա կան պառկած առյուծների բարձրաքանդակ պատկերներ։

Կամուրջի ձախակողմյան ծայրի մոտ դրված է մի խաչքար, որի վրա է գտնվում նրա կառուցման արձանագրությունը։ Այդ արձանագրությունն, ինչպես վկայում է Հովսեփ արքեպ. Արղությանը, 1795 թվականին Աղա Մահմեդ խանի հրոսակները Թիֆլիսի վրա արշավելու միջոցին գլուխը կոտրել և մի կողմ են գցել, Արղությանցը նորից իր տեղն է ամրացրել այն, բայց գլխի ջարդված մասը, որի վրա եղել է թվականը, այլևս չի գտել և այդպիսով այս հետաքրքիր կամուրջի կառուցման ճիշտ թվականը մնացել է անհայտ։

Վ. Հարությունյանն ու Ս. Սաֆարյանը կամուրջի կառուցումը դրել են 1234 թվականին[1], Հովս. Եղիազարյանը կամուրջի կառուցումը դրել է մինչև 1234 թ.[2], բայց թե ի՞նչ հիման վրա, մեզ անհայտ է։

Ինչպես հայտնի է, Կյուրիկյան Աբաս թագավորը մեռել է 19-ամյա հասակում՝ 1192 թվականին,[3] նրա հիշատակին կնոջ կողմից կառուցված կամուրջն էլ պետք է լիներ մահվան հաջորդող մոտակա տարիներին և ոչ թե 42 տարի հետո, ինչպես ենթադրել են Վ. Հարությունյանն ու Ս. Սաֆարյանը։

Նշանակում է, կամուրջի կառուցման հա-



Նկ. 17. Ս. Գրիգոր եկեղեցու որմնասյուների մնացորդները տաճարի պատերին։

վանական ժամանակը 1192-ից հետո նույն տասնամյակն է և ոչ թե 1234 թվականը։

13. Հյուրատուն։ Այս շենքն այժմ գոյություն չունի։ Նա շինված է եղել 1205 թվականին խաչենցի Հովհաննես առաջնորդի ժամանակ՝ «Վասն փրկութեան հոգոյ իմոյ և արեշատութեան տէրանց մերոց Զաքարի և

[1] В. М. Арутюнян и С. А. Сафарян, Памятники..., стр. 56.
[2] Հ. Եղիազարյան, Ալավերդու շրջանի կուլտուրայի հուշարձանները, էջ 17։
[3] Հ. Դ. վ. Մովսեսյան, Լոռի Կյուրիկյան թագավորներու պատմություն, էջ 71։